ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
երկու հազար տասնյոթ թվականի նոյեմբերի քսանյոթ

Մենք՝ ներքոստորագրողներս, մի կողմից քաղ. Գևորգ Ազատի Խումարյանը/ ծնված 23.05.1964թ. անձ AM 0505987 տրված 08.11.2011թ, 016 կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, 26 Կոմիսարների 2 /, /այսուհետ ,,Վարձատու,,/, մյուս կողմից ,,Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկը,, /պետական գրանցման վկայական 01 Բ 000932, տրվ. 21.04.2004թ., գտնվելու վայրը ք. Երևան-10, Կառավարական տուն 3/, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արտակ Աշոտի Գրիգորյանի, հաշվ. Մարտունի, Աստղաձոր 4փ. 16 տուն, անձնագիր AM 0389543, տրված 25.07.2011թ. 043-ից, /այսուհետ ,,Վարձակալ,,/ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Գյումրիի Ալ. Մանուկյան փողոցի 30 հասցեում գտնվող անշարժ գույքի առաջին հարկից թիվ 4-26.09 քմ, թիվ 5-3.22, թիվ 6- 1.8քմ, թիվ 7-1.8 քմ, թիվ 9- 1.82 քմ, թիվ 10-8.3 քմ մակերեսով տարածք /հատակագիծը կցվում է/, բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու նպատակով: Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրիի տարածքային ստորաբաժանման կողմից 16.03.2011թ տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների թիվ N 2425277 պետական գրանցման վկայականի: Վարձակալությամբ տրվող անշարժ գույքը սույն պայմանագիրը կնքելու պահին գրավադրված է <Յունիբանկ> ՓԲԸ-ում, որը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրիի տարածքային ստորաբաժանման կողմից 10.11.2017թ.-ին տրված թիվ N ՄՏ-10112017-08-0235 միասնական տեղեկանքի: Անշարժ գույքը վարձակալությամբ է տրվում գրավառու <Յունիբանկ> ՓԲԸ –ի 22.11.2017թ թիվ Վ-1905 համաձայնությամբ, պայմանով որ

- վարձակալության պայմանագիրը կդադարեցվի և տարածքը կազատվի 30-օրյա ընթացքում <Յունիբանկ> ՓԲԸ-ի առաջին իսկ գրավոր պահանջի դեպքում,
- վարձակալված գույքը ենթավարձակալության կարելի է հանձնել միայն <Յունիբանկ> ՓԲԸ-ի համաձայնությամբ:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը վարձակալության է տրվում մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը: Օբյեկտը հանձնվել է 27.11.2017թ-ին:

1.3 Վարձակալության հանձնված օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի, հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն իրավունք ունի

2.1.1 Վարձակալից պահանջել օբյեկտն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ՝ տվյալ եռամսյակի առաջին հինգ օրվա ընթացքում մուծել վարձավճարը.

2.1.3 Եթե Վարձակալն օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակության էական խախտումներով, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2 Վարձատուն պարտավոր է

2.2.1 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2 Օբյեկտը Վարձակալին հանձնել դրան վերաբերող փաստաթղթերով.

2.2.3 Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավի իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին.

2.2.4 Մեկամսյա ժամկետում քննարկել Օբյեկտի վերանորոգման և վերասարքավորման հարցերի հետ կապված Վարձակալի դիմումները.